

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-ԻՆ ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ԾՐԱԳԻՐ 2» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

2 սեպտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի,
Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի
Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ Ա. Առաքելյանի,
համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ
հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական
դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ
հոդվածների,

դոնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2014 թվականի հունվարի 21-ին և 2014 թվականի հունիսի 11-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2011 թվականի մայիսի 30-ին ստորագրված՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 2» վարկային համաձայնագրում (հատուկ գործողություններ) փոփոխություն կատարելու մասին նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի հուլիսի 14-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, ինչպես նաև լսելով նրա բանավոր պարզաբանումները, հետազոտելով նամակ-համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2011 թվականի մայիսի 30-ին ստորագրված՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 2» վարկային համաձայնագրում (հատուկ գործողություններ) փոփոխություն կատարելու մասին նամակ-համաձայնագիրն (այսուհետ՝ նաև Նամակ-համաձայնագիր) ստորագրվել է Ասիական զարգացման բանկի կողմից 2014 թվականի հունվարի 21-ին, իսկ Հայաստանի Հանրապետության կողմից՝ 2014 թվականի հունիսի 11-ին:

Նամակ-համաձայնագրի պայմանագրաիրավական հիմք հանդիսացող՝ 2011 թվականի մայիսի 30-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային

ծրագիր - Ծրագիր 2 (հատուկ գործողություններ)» վարկային համաձայնագիրը (Վարկային համաձայնագիր), ելնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2011 թվականի հունիսի 16-ի ՍԴՈ-979 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումից, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2011 թվականի հունիսի 23-ի ԱԺՈ-280-Ն որոշմամբ:

2. Նամակ-համաձայնագրով Վարկային համաձայնագրով նախատեսված Ծրագիր 2-ի շրջանակներում վարկի փակման ժամկետը երկարաձգվում է 24 ամսով: Այդ նպատակով Վարկային համաձայնագրի 3.05-րդ բաժնի՝ «2015 թվականի հունիսի 30» բառերը փոխարինվում են «2017 թվականի հունիսի 30» բառերով:

Ելնելով սույն գործի նյութերի ուսումնասիրության արդյունքներից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Նամակ-համաձայնագրով նախատեսված փոփոխությունը պայմանավորված է Ծրագրում ներառված բաղադրիչների, մասնավորապես՝ Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների բնականոն, ամբողջական և պատշաճ կատարման ապահովման անհրաժեշտությամբ: Համաձայն Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրության՝ կառուցվող Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի համար շինարարական աշխատանքների կապալի պայմանագիրը կնքվել է 2012 թվականի ապրիլի 27-ին: Սակայն շինարարական աշխատանքները մեկնարկել են միայն 2013 թվականի հունիսի 13-ին՝ կապված նշված հատվածում Ծրագրով պահանջվող հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման ու ճանապարհի կառուցման համար անհրաժեշտ տարածքը երրորդ անձանց իրավունքներից ազատելու գործընթացի ավարտման հետ: Հարկ է նկատել, որ հողերի օտարման և տարաբնակեցման ընթացակարգը բարեփոխելու նպատակով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-105-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որն ուժի մեջ է մտել 2014 թվականի օգոստոսի 9-ին: Շինարարական

աշխատանքների պայմանագրի համաձայն՝ աշխատանքների տևողության ժամկետը սահմանված է 1096 օր, ինչի արդյունքում շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտել 2016 թվականի հունիսի 12-ին, այսինքն՝ մոտ մեկ տարի ավելի ուշ, քան վարկի փակման ամսաթիվն է: Հաշվի առնելով հիշյալ հանգամանքը, ինչպես նաև այն, որ թերությունների վերացման համար նախատեսված է մեկ տարի ժամկետ, ուստի Հայաստանի Հանրապետությունը և Ասիական զարգացման բանկը համաձայնել են վարկի փակման ամսաթիվը երկարաձգել 24 ամսով, այսինքն՝ մինչև 2017 թվականի հունիսի 30-ը:

Նամակ-համաձայնագրով նախատեսված փոփոխությամբ Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է պարտավորություն՝ վճարել լրացուցիչ պարտավճար՝ շուրջ 240 հազար ԱՄՆ դոլարի չափով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2014 թվականի հունվարի 21-ին և 2014 թվականի հունիսի 11-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2011 թվականի մայիսի 30-ին ստորագրված՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 2» վարկային համաձայնագրում (հատուկ գործողություններ) փոփոխություն կատարելու մասին նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2 սեպտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1158